

## ՄԱՅՐ ԸԹՈՒԻ

Նորին Սըբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ.  
Գէորգ Ե. օգոստոսի 20-ին բարեհամեց ժամանել Մայր Աթոռ  
իւր ամարային հանգստեան վայրից՝ Բիւրական գիւղից։ Սըբազ-  
նագոյն Կաթուղիկոսին ուղեկցում էին գիւղանապետը, միա-  
բանութեան աւագագոյն անդամն ու վանական կառավարու-  
թեան նախագահը, Խաչ և գաւազան էին կըում Տ. Տ. Վրթանէս-  
աբեղան և Գէորգ վարդապետ Զէօրէքչեանը։ Նորին Սըբութեան  
վանքի արտաքին դռան առաջ սպասում էր Մայր Աթոռի ամ-  
բողջ միաբանութիւնը և Վաղարշապատից խուռն բազմութիւն։

Սըբազնագոյն Հայրապետի Մայր Աթոռ ժամանելուց յեւ-  
տոյ սկսուեցան նախապատրաստութիւնները եպիսկոպոսական  
ձեռնագրութեան համար, որին արդէն մօտ երկու շաբաթ  
սպասում էին Թիւքքիայից եկած ընծայացուները։ Ձեռնագրու-  
թիւնը նշանակուեց օգոստոսի 25-էն։ Նոյն ամսի 23-ին Վե-  
հափառ Կաթուղիկոսի բարձր հրամանով Տ. Տահակ արքեպիս-  
կոպոս Այվատեանը ծայրագոյն վարդապետութեան աստիճան  
տուեց Տ. Տ. Քագրատ և Մատթէոս վարդապետներին, որոնց  
համար Սըբազնագոյն Հայրապետն արդէն վճիռ էր կայացրել  
եպիսկոպոս ձեռնագրելու Թիւքքիայից եկած ծայրագոյն վար-  
դապետների հետ։ Ամսիո 24-ին համաձայն Վեհափառ Հայրա-  
պետի կտնդակի ո. Ս. Սինոգը իւր ամբողջ կազմով Մայր Տաճա-  
րում ո. Խջման աեղի առաջ սահմանուած կարգով Մայր Աթո-  
ռին և ընդհանրական Հայրապետութեան հաւատարմութեան  
ուստի և երդման ենթարկեց եպիսկոպոսական ընծայացու-  
ներին՝ Տ. Տ. Քագրատ, Գնէլ, Մատթէոս, Մեսրոպ և Ղեղնդ-  
ծայրագոյն վարդապետներին։ Յաջորդ օրը նորին Վեհափառու-  
թիւն Տ. Տ. Գէորգ Ե. Սըբազնագոյն Կաթուղիկոսը բարեհա-  
մեց ո. պատարագ մատուցանել և եպիսկոպոս ձեռնագրել  
վերոյիշեալ հինգ ծայրագոյն վարդապետներին հեռաւոր և  
մօտաւոր վայրերից ժողովուած խուռն բազմութիւն հանդի-  
սատեների և աղօթաւորների ներկայութեամբ։ Վկաներն էին

Տ. Տ. Սահակ Այվազեան և Յովհաննէս Նիքարակունի արքեպիսկոպոսները, իսկ Խարտաւելակը՝ Տ. Կորէն Եպիսկոպոսը:

Նորագուակ Եպիսկոպոսները մասին կարեւը ենք համարում գրի առնել հետեւեալ կենսագրական համառօտ տեղեւիութիւնները:

1. Տ. Տ. Բագրատ Եպիսկոպոս Վարդաղարեանը ծնուել է 1869 թուին Վլագիկաւեկազում: Իւր նախնական ուսումնատացել է Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեոր ձեմարանում, որի վիակատար դատընթացն աւարտել է 1892 թուին: Ապա 1897—1900 թուականներին՝ ամբողջ Երեք տարի, նա լսել է Մոռկուայի համալսարանում իրաւաբանական և պատմական գիտութիւններ և 1899 թուին ընարուել է աշխատակից անդամ Ռոյն համարարանին կից հիմնուած Բնագիտական, մարդաբանական և ազդագրական Կայսերական ընկերութեան: Ձեմարանն աւարտելուց և 1892—1893 տարին սւսուցչական պաշտօնով իւր հայրենի քաղաքի հայոց Եկեղեցական-ծխական գպրոցին ժառացելուց յետոյ նա 1893 թուականի աշնանն ընդունուել է Մայր Աթոռի միարան, կենտրոնական Ուսումնարանական Յանձնաժողովի քարտուզար կարգուել և այս պաշտօնը վարել է մինչև 1895 թիւր, երբ հանդուցեալ Արիստակէս արքեպիսկոպոս Սեղբակեանի հետ գնացել է Աստրախան ու տեղի հայոց օրիորդաց դպրոցի ուսուցիչ նշանակուել: Յաջորդ 1896 թուի յունուարին արեղայ ձեռնազբուելով նա նոյն տարուայ ապրելին կարգուել է վերատեսուշ Հիւսիսացին Կովկասի հայոց Եկեղեցեաց գործակալութիւնների և մի և նոյն ժամանակ այդ շրջանի քարոզէ: Վարդապետական մասնաւոր իշխանութիւնն ստացել է 1899 թուին և մի տարի ևս Մոսկուայի համալսարանում աշխատելուց յետոյ 1900 թուին գնացել Պարսկա-Հնդկաստանի թեմը՝ Գէորգ-Քանանեան դպրոցը հիմնելու համար, մի և նոյն ժամանակ նշանակուելով նոյն վիճակի ընդհանուր փոխանորդ, իսկ 1902 թուին նաև Պարսկա-Հնդկաստանի հայոց դպրոցին երի թեմական տեսուչ: Այս պաշտօնները մօտ տասն տարի վարելուց յետոյ նա վերադարձել է Մայր Աթոռ 1910 թուականի յունուարին, երբ ընարուել է Հայրածուական դիւանի անդամ, իսկ յաջորդ ամսին սատանձնել այդ խորհրդի նախագահի կամ դիւանապետութեան պաշտօնը: Նոյն տարուայ օգոստոս ամսին նա կարգուել է նաև տեսուչ Գէորգեան Հոգեոր ձեմարանի:

Տ. Տ. Բագրատ Եպիսկոպոսը ներկայում վարում է Գիւտնագութեան, ձեմարանի տեսչութեան և Կենտրոնական Ուսումնարանական յանձնաժողովի նախագահահութեան պաշտօնները:

Հ. 8. Գնէլ եսպիսկոպոս Գալէմքարեանը ծնուել է 1871թուն  
Կոռուանդնուու պողոսում: Եթ նախնական կրթութիւնը Գալքարիւզի  
Արքամետն ան աղդային և Մխիթարեան գեշերօմիկ վարժարանների  
մէջ ստանալուց յետոյ աշակերտել է Արմաշի Գալքարանքին,  
և շրջանառւարտ է եւած իր «Օթենեաց հայրոց» թէզովը:—Դրագ-  
բեկանքի Փ. վանահայր և վերատեսուց Օրմանեան ուրատզմնից  
ստացել է Գալքարանքում 1890-ին դպրութեան չորս աստիճան և  
1893-ին սարկառագուրեան աստիճան: Խոկ 1897 յունուար 19-ին  
նոյն Օրմանեան պատրիարքից վարդապետ է ձեռնադրուել Գա-  
լքարիւզի ո. Թագաւոր եկեղեցու մէջ՝ դարձեալ Նորին Ամե-  
նապատութիւնից մէկ տարի յետոյ գաւագանի իշխանութիւն  
և 1903-ին ծայրագոյն վարդապետութեան աստիճան է ստացել:

Վարել է Կ. Պոլսում ո. Պատրիարքի անձնական քարտու-  
զարութիւնը և քարտզական պաշտօններ Խառզիւզում, Վա-  
լաթիայում և Յատր դիւզում: 1899—1902 Սամսոնում և  
1903—1904 Մուշում առաջնորդական պաշտօններ վարե-  
լուց յետոյ Թուրքիոյ ըոնակալ վարչութեան օրով 4 տարի  
արսորական է մնացել Տրավելիզում Հայկական Խնդրով:—  
Ապա 0սմ. Սահմանադրութեան հռչակմամբ ազատագրուելով  
ընտուել է Կ. Պոլսում Ազգ. Երևափոխան և միանդամայն կեդր.  
վարչութեան անդամ:—1909-ի Կիլիկեան ջարդին Պատրիարքարանի  
կողմից Եկեղեցական-պատուիրակի պաշտօնով գնացել է Ատանա-  
և մի առ մի այցելել ըոլոր արկածեալ վայրերը:—1908-ի ընդ-  
հանրական Կաթողիկոսի ընտրութեան մասնակցել է ո. Եղիսած-  
նում, իբր պատղամուոր Զարսանճակի և Զմշկածագի վիճակ-  
ների:—1910 յուլիս 19 թուականաւ Խուրեան ո. Պատրիարքին  
մատուցել է առաջին անդամ մի ընդարձակ Ցիւատակազիր,  
Եկեղեցական-ծխական քարեկարգութեան պէտքի մասին: 1908  
—1912 վարել է Վալաթիոյ Աղդ. մատենադարանի վերատես-  
չութիւնը:

1912-ին կօչուելով Ռումանիոյ առաջնորդական պաշտօ-  
նին, ցարդ վարում է այն և նոյն վիճակի ֆողավրդեան ձայնով  
ու Կ. Պոլսոյ Պատրիարքարանի ընծագադրով ձեռնադրեում է  
Ելիսոկոպոս:—Երջանկայիշատակ Խրիմեան Կաթողիկոսից վար-  
ձատընուած է վարդապետական ականակուռ խաչով:—Եթ կրօ-  
նական-մատենադարական յօդուածներով աշխատակցում է Կ.  
Պոլսոյ «Ճաճար» շաբաթաթերթին:

3. 8. Մատթէսս եպիսկոպոս Մատթէսեանցը ծնուել է Ե-  
մեանում 1866 թուին: Խամինական ուսումնական առնելով Երևանի

թեմական դպրանոցում, նա աւարտել է հայրսիսեան հոգեոր դպրանոցի լիակատար գասընթացը 1886 թուին, նոյն տարին նուիցուելով մանկավարժական գործունեութեան և անքնդհատ պաշտօնավարելով հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում մինչև սոցակազման օրը՝ 1896 թուականին՝ ամբողջ տասն տարի իրքեւ ուսուցիչ և աւադ-ուսուցիչ։ Նոյն թուականին ընդունաւելով Մայր Աթոռի միաբանութեան շարքը և նոյն տարուայ սեպտեմբերին ու նոյեմբերին ստանալով ջահընկալութեան և աւագ-սարկաւագութեան աստիճանները, յաջորդ 1897 թուի մարտին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ-արքեպայ, իսկ գեկտեմբերին վարդապետական մասնաւոր իշխանութիւն ստացել և նշանակուել գործակալ նոր-Բայազիտի և Գարաջիշակի շրջանների։ 1898 թուի գեկտեմբերին նա կարգուել է նախանդամ Դարարազի կոնսիստորիայի և՝ առաջնորդական աթոռի թափուր լինելու պատճառով, միենոյն ժամանակինաւագան տեղի հոգեոր դպրանոցի հոգաբարձութեան։ 1899 թուի սեպտեմբերին յետ կանչուելուց և մինչև 1901 թուի ապրիլ ամիսն Ալեքսանդրովիլ փոխանորդ լինելուց յետոյ Մատթէոս վարդապետը կամովին հրաժարուել է պաշտօնից և ստանձնել է Մայր Աթոռի տպարանի տեսչութեան պաշտօնը, որ և վարել է մինչև 1903 թուի մարտ ամիսը, երբ Բագուի եկեղեցիների գործակալ է կարգուել։ Այս պաշտօնը թողել է նա 1904 թուի յուլիսի 19-ին ու Սինոդի անդամ հաստատուելով։ Մատթէոս վարդապետը մօտ երկու տարի պաշտօնավարելուց յետոյ անակնկալ կերպով առանց իւր հրաժարականի և կամ գիտութեան 1906 թուականի մայիս ամսին արձակուել է Սինոդի անդամութեան պաշտօնից և առաջարկութիւն ստացել Մկրտիչ Ա. Խըմեան Կաթողիկոսից ստանձնելու Արքպատականի առաջնորդութեան պաշտօնը, որ և մերժել է չկամենալով հակառակ ընթանալ ժողովրդական ընարութեան սկզբունքին, որ յայտարարուած էր և քանից կիրարկուած նոյն թեմում երջանկալի շատակ իսկ տնօրէնութեամբ։ Սակայն Մատթէոս վարդապետին վիճակուած չի եղել երկար ժամանակ առանց պաշտօնի մնալ, քանի որ Ալեքսանդրոպոլի փոխանորդութեան պատգամաւորական ժողովը նորա նախկին գործունէութեան ժանօթ լինելով և գնահատող, զրեթէ միաձայն նորան ընտրել է և Մատթէոս վարդապետը երկրորդ անգամ վարել է այդ վիճակի փոխանորդութեան պաշտօնը մինչև 1908 թուականը, երբ նորից Սինոդի անդամ է հաստատուել և այս պաշտօնի մէջ է մինչև օրս։ Բայց Սինոդի անդամութիւնից Մատթէոս եպիսկոպոսը ներկայումս վարում է նաև

հետեւալ կարեօր պաշտօնները՝ նա է անդամ Հայրապետական դիւնանի, Կենտրոն Դատավական Յանձնաժողովի և Մայք Տաճարի վերանորոգութեան մասնաժողովի, Տեսուչ է ապաքանի և նախագահ վանական կալուածների յետքնման յանձնաժողովի:

8. Մատթէոս եպիսկոպոսը իւր անցեալ գործունէութեան շրջանում ևս արժանացել է կենդրանական իշխանութեան և ժողովրդի յատուկ ուշագրութեան՝ այլ և այլ կարեօր պաշտօնների և յանձնաբարութիւնների կոչուելով։ Այսպէս՝ նա երկեցս տեսուչ է ընտրուել թեմական հողեռոք զպըանոցների, 1901 թուին Երևանի և 1903-ին Շուշու, թէև ի՞նչ-ի՞նչ պատճառներով հրաժարուել է։ 1909 թուականին վարել է ամուղըիս միահեծան խմբագրի ծանր և պատասխանատու պաշտօնը, անցայտ չէ նաև իւր դրական աշխատութիւններով։ այլ և այլ ժամանակներում քննիչ է կարգուել Կարոի և Տաթէե փոխանորդութեանց գործերի և ընդհանուր զերաքննութեան է ենթարկել Վրաստանի և Խմերէթի թեմը, Ախալքալակի Երկրաշարժից յետոյ Հայրապետի հրամանով այցելել է աղէտեալներին ու մխիթարել, 1906 թուին զեկավարել է Առօգատականի առաջնորդական ընտրութիւնները, իսկ 1908-ին Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան նախադահի հետ շրջակացել է Անդրկասպեան Երկերը և մայքրագաղաքներն ու բաւականին դդալի մի գումար հանդանակել եկեղ.-ծխական զպըոցների համար։

4. 8. Մեորոպ եպիսկոպոս Նարոյեանը ծնուել է Մշոյ Արդերթ գիւղում 1875-ին։ Նախնական կրթութիւնը ստացել է Մշոյ ու Կարանքեա վարժարանում։

1895-ին աշակերտել Արմաշու Դպրեվանքին։ 1898-ին սարկաւագ է ձեռնադրուել Օրմանեան Սրբազնից, 1901-ին վարդապետ՝ Գուրենեան Սրբազնից, 1909-ին ծայրագոյն վարդապետ՝ Խղմեթեան Կաթողիկոսից։

1905-ին Ներքին Տեսուչ է կարգուել Արմաշու Դպրեվանքի, և 1909-ին Ազգ. կետր. վարչութիւնից վանահայր և վերատեսուչ անուանուել Դպրեվանուց։

Դպրեվանքի մէջ դասախոսել է մասնաւորապէս հայագիտական Ներքեցոյ, հայ Եկեղեցոյ, հայ մատենագրութիւն, հայերէն լեզու և սարկաւագների դասարանումն էլ աստուածաբանութիւն։

Գրել է «Հայ Եկեղեցոյ պատմութիւն» իր դասարգերք, Նիւթ ունենալով բանասիրական և մատենագրական արգի հե-

տագօտութեանց բոլոր արդիւնքներն ու տուեալները:

Գլական և կրօնական բազմաթիւ յօդուածներ ունի թիւրքահայ թերթերի և հանգէսների մէջ, երբեմն Հայմակ ժած-իւնունով:

Գետէ ֆրանսերէն, թուրքերէն և ինքնաշխատութեամբ ուսել է նաև գերմաներէն:

5. Տեսնգ եպիսկոպոս Դուրեանը ծնուել է 1879 դեկտ. 29-ին, ընիկ Պոլսեցի է, աշակերտել է Պետքեան վարժարանին, ապա 16 տարեկան հասակում ուսուցիչ է կարգուել ձեմարան վարժարանին (Խւակիւտար): 1898 թուին յուլիսի վերջերը Արմաշի Դոլը վանքը մանելով 2 տարի յետոյ սարկաւագ և 1901 մայիս 20-ին կուսակրօն քահանայ է ձեռնադրուել ամենապատիւ Դուրեան Եղիշէ արքեպիսկոպոսից: 1902-ի վերջերը Պոլիս կոչուելով Օքմանեան Պատրիարքի տնձնական քարտուղարն է Եղիշ մինչև 1908 յուլիս 10 օսմ. սահմանադրութեան հոչակուած թուականը: միենոյն ժամանակ 7 տարի Դամբէօյի քաջողական պաշտօնն է վարել: 1906-ին Կրօն. Ժողովի անդամ և Ա. Ատենադպիր է ընտրուել: 0 օսմ. սահմանադրութեան հոչակմամբ և Գարբիէլ եպս. ձեվահիրճեանի հրաժարմամբ խառն Ժողովից ընտրուել է Պատր. Փոխանորդ և նոյն պաշտօնը վարել Խզմիրլեան, Դուրեան Պատրիարքների, Մանկունի որբազանի տեղապահութեան, ինչպէս և Արշարունի Պատրիարքի օրով՝ մինչև 1912 թ. ապրիլ 6-ը: Խզմիրլեան Սրբազնից 1909 թ. մայիս 10-ին Ժայռագունութեան աստիճան է սահցել, իսկ Յունաց Եպիվակիմ Պ. Պատրիարքից ժապաւինազարդ լանջախաչ: Խզմիրլեան Կաթողիկոսից և Ա. Լանջախաչով է պարզեատրուել: Ազգային Երեսփոխան է ընտրուել 1909 թուականին և 1912 մայիս 14-ին Եղիշնէի (Ա. Գրիանապուսի) աշուածնորդ: Սուլթանից Բ. Կարգի Մէնիղիէի պատուանշանն է սահցել: Եպիսկոպոս ձեռնադրուելու համար վկայականն սահցել է նա 1912 օգոստոս 29-ին: Իր Երկերն են. 1. «Չորս Աւետարաններու ծագումը և վաւերաբանութիւնը» 2. «Պարզ Քարոզներ» և 3. «Մկրտութեան Խօրհութքը»: «Բիւզանդիոն» օրաթերթի մէջ հրատարակել է «Վրոյը» ծածկանուամբ եկեղեցական բարեկարգութեան և անուանական օրէնքների վերաբերող յօդուածներ:

Այս տարուայ օգոստոսի սկզբներին մեծ շուքով կատարուեց Դարաբաղի թեմական հոգեոր դպրանոցի եօթանառւն և հինգ ամեայ յոբելեանը: Ազգիս Վեհափառ Հայրապետ քարեհանձել էր եւր բարձր հովանաւորութեան ներքոյ առնել այս ազգային-կուլտուրական տօնը և ըստ ամենայնի նպաստել նորա յաջողութեան՝ յատկապէս դպրանոցի նիւթական ապահովութեան խնդրում: Այդ նպատակով նորին Սըրութիւնը թոյլ էր տուել Դարաբաղի թեմի կառավարիչ Տ. Զաւէն վարդապետին այցելել հայկական մեծ կենտրոնները և հոգալ յարելիար դպրանոցի մշտական ապահովութեան համար՝ իւր կողմից ևս խրախուսելով այդ գործը և ներկայացուցիչ կարդելով Սինոդի անդամ Տ. Բարգէն վարդապետին: Տ. Տ. Բարգէն և Զաւէն վարդապետների առաքելութիւնը պսակուեց մեծ յաջողութեամբ՝ երեք հարիւր հազար սուրբուց աւել հանդանակութեամբ՝ որով ընդ միշտ ապահովուած պէտք է համարել դպրանոցի նիւթական գոյութիւնը: Այս յաջողութիւնը մեծ ցնծութեամբ ու երախտագիտութեամբ ընդունուեց Դարաբաղի թեմական դպրանոցով հետաքրքրուող ամեն մի հայի կողմից, որով և հասկանալի է դառնում տօնակատարութեան մինչև այժմ չտեսնուած վառահեղութիւնն ու դարաբաղցիների միահամուռ բերկրանքը:

Խուսափելով այս փառաւոր տօնակատարութեան նկարագրութիւնից, որ ամենայն մանրամասնութեամբ արգէն իւր ժամանակին զետեղուած է հայ օքաթերթերի էջերում, մեր ընթերցողների համար կարեռ ենք համարում հրատապաել այն պաշտօնական զեկուցումը, որ յոբելեանի կատարման մասին հեռագործ արել է Սըրագնադոյն Կաթուղիկոսին Դարաբաղի թեմի կառավարիչ Տ. Զաւէն վարդապետը:

### ՆՈՐԻՆ ՍԲԸՈՒԹԵԱՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Դպրանոցի 75-ամեայ յոբելեանի կատարման ծրագրի համաձայն օգոստոսի 4-ին Գանձասարում Բարգէն վարդապետի, իմ, յոբելեանական յանձնաժողովի անդամների, պատգամաւորների և ժողովրդի ներկայութեամբ կատարուեց հոգեհանգիստ դպրանոցի հիմնադիր երջանկայիշատակ Բաղդասար Մետրապոլիտի համար: Օգոստոսի 10-ին և 11-ին թեմի ամբողջ հոգևորականութեան, պատգամաւորների,

բոլոր դպրոցական և այլ հաստատութիւնների ներկայաց-  
ցուցիչների և հազարաւոր ժողովրդի ներկայութեամբ Ա-  
գուլեցոց և Ղազանչեցոց եկեղեցիներում կատարուեց Կայ-  
սերական և Հայրապետական մաղթանք։ Հին դերեզմա-  
նոցում հոգեհանդիստ կատարուեց Բաղդասար Մետրո-  
պոլիսի երջանկայիշատակ ծնողի—Դանիէլ-Բէգ Հասան  
Զալյաեանի համար։ Այդաեղից շքերթը շարժուեց դէպի  
դպրանոցի բակը, որտեղ կարգացուեց Զերդ Արքութեան  
կոնդակը. ճառեր արտասանեցին Բարդէն վարդապետը  
և պատգամաւորներից շատերը. Երգում էր աշակեր-  
տական խումբը, նուագում՝ երաժշտախումբը. Ժողո-  
վուրդը բերկրանքի մէջ էր։ Ստացուած են մի քանի  
հարիւր շնորհաւորական հեռագրեր՝ Բաղդասար Արգուման-  
եանից, համալսարաններից և ուրիշ կուլտուրական հիմն-  
արկութիւններից, թերթերի և հանդէսների խմբագրու-  
թիւններից, դպրանոցի նախկին տեսուչներից, ուսուցիչ-  
ներից ու սաներից և մասնաւոր մարդկանցից։ Բաղդասար  
Արգումանեանի կողմից ներկայ էր Մելքիսեդեկ Տէր-Յա-  
կովբեանը։ Ընդհանրապէս յոբելեանը տօնուեց շատ մեծ  
հանդիսաւորութեամբ։ Այս ամենի մասին ակնածութեամբ  
և որդիական երախտագիտութեամբ զեկուցանում եմ Զերդ  
Արքութեան։ Շուշու և ամբողջ թեմի ժողովուրդն ու ես  
յայտնում ենք մեր որդիական շնորհակալութիւնը Զերդ  
Վեհափառութեան ցոյց տուած բարձր հովանաւորութեան  
համար։

## Ղարաբաղի թեմի ժամ. կառավարիչ

## Զանեն վարդապետ: